



ԺՈՒՌՆԱԼԻՍՏՆԵՐԻ «ԱՍՊԱՐԵԶ» ԱԿՈՒՄԲ

ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆ-3102, ԳՅՈՒՄՐԻ, ՊՈՒՇԿԻՆԻ Փ. 96, ՀԵՌԱԽՈՍՐՔ (0312) 50622

JOURNALISTS' CLUB "ASPAREZ"

NON-GOVERNMENTAL ORGANIZATION

POUSHKIN STREET 96, GYUMRI, ARMENIA 3102, TEL: (0312) 50622

Email: levon@asparez.am; <http://www.asparez.am> <http://www.publicdata.am>

07 սեպտեմբերի, 2021 թ.

Դիմում

Սոցիոլոգիական հարցում

Լոռու մարզպետ Արամ Խաչատրյանին (lori@mta.gov.am)

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի մոնիթորինգի իրականացման մասնագետ
Արուս Մանուկյանից

Հարգելի՛ պարոն մարզպետ,

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը, Թրանսփարենսի ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոնի հետ համագործակցությամբ եւ ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ իրականացնում է մի ծրագիր, որի շրջանակներում իրականացնում ենք պետական բյուջեի միջոցներից մարզպետարանների/մարզպետների կողմից քաղաքացիներին հատկացված ֆինանսական օժանդակությունների մոնիտորինգը, այդ գործում պրակտիկական պարզելու, նորմատիվային կարգավորումները կատարելագործելու, բարեփոխումների նպատակով կառավարությանն ուղղվելիք առաջարկությունների փաթեթ կազմելու եւ համատեղ քննարկելու համար: Այդ մոնիտորինգի շրջանակներում ուսումնասիրում ենք, թե 2018-2019 թթ. ինչպես են իրականացվել վերոհիշյալ հատկացումները ՀՀ տարբեր մարզերում: Այս մոնիտորինգի շրջանակներում նախատեսվում են խորին հարցազրույցներ մարզպետարանների համապատասխան աշխատակիցների եւ շահառուների հետ:

Ենթադրելով փոխըմբռնում եւ սերտ համագործակցություն այս գործում, ակնկալում էինք, որ մարզպետարանի աշխատակիցները կկամենան բանավոր հարցազրույցով պատասխանել հետազոտության կարիքներից բխող մեր մի շարք հարցերին: Սակայն նկատելով, որ աշխատակիցները հրաժարվում են նման հարցազրույցից, ստիպված այս հարցմամբ խնդրում եմ հանձնարարել՝ 2018-19թթ.-ին «Այլ նպաստներ բյուջեից» տողով Լոռու մարզպետի կողմից ֆինանսական աջակցություն տրամադրելու համար **որոշում կայացնողների խմբում ներառված անձանց եւ այդ խումբ ձևավորող անձանց** համապատասխանաբար լրացնել ներքոնշյալ հարցաշարերը բանավոր հարցազրույցի փոխարեն: Այս պատասխանները մեզ կօգնեն այդ ֆինանսական օգնությունները ավելի արդյունավետ բաշխելու նպատակով առաջարկությունների մշակման եւ կառավարությանը ներկայացնելու համար:

Հարգանքով՝ Արուս Մանուկյան _____

Հարցվողի սեռը՝ _____, Տարիքը՝ _____
Ամսաթիվ՝ _____/_____/____

ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ (ԽՈՒՄԲ ԶԵՎԱՎՈՐՈՂԻ)

ԽՈՐԻՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

**Պետական բյուջեից տրամադրվող սոցիալական աջակցության գումարների բաշխումը
2018-2019թթ.**

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը իրականացնում է հարցում, որի նպատակ է պարզել, թե ինչպես են բաշխվում կառավարության կողմից տրամադրվող և մարզպետարանների կողմից տնօրինվող սոցիալական աջակցության միջոցները, որոնք տրամադրվում են կյանքի դժվարին իրավիճակում հայտնված բնակչությանը, ինչ ռիսկեր և խնդիրներ է պարունակում վերոնշյալ գործընթացը և դրա արդյունավետությունը բարձրացնելու ինչ ուղիներ կան: Շնորհակալություն ժամանակ տրամադրելու և պատրաստակամորեն հարցազրույցին մասնակցելու համար:

1. Խնդրում եմ մի փոքր ներկայացնել մարզպետարանի բյուջեից հատկացվող սոցիալական աջակցության տրամադրման գործընթացը:

--

2. Ինչպե՞ս է նախագծվում/կազմվում սոցիալական աջակցության բյուջեն, մշակվում գործողությունների պլանը: Տարանջատվո՞ւմ են արդյոք սոցիալապես անապահովների ֆինանսավորման առաջնահերթությունները:

--

3. Ինչպե՞ս եք իրականացնում սոցիալական աջակցության տրամադրման բյուջեի վերահսկումն ու վերլուծությունը:

--

4. Ի՞նչ սկզբունքով է պետության կողմից սոցիալական աջակցության համար ֆինանսական միջոցներ տրամադրվում մարզպետարանին և պատկան

մարմինների կողմից վերահսկվում է արդյոք այդ միջոցների բաշխումը: Եթե այո՝ ինչպե՞ս:

5. Սոցիալական աջակցություն ստանալու համար դիմելու պարագայում օրենքով սահմանված ի՞նչ պահանջների պիտի բավարարի շահառուն, ի՞նչ հիմնավորումներ կամ փաստաթղթեր պետք է ներկայացնի:

6. Սոցիալական աջակցություն տրամադրելու/չտրամադրելու հարցում ո՞վ/ովքե՞ր են որոշում կայացնում:

7. Որոշում կայացնողների խմբի ձևավորման համար կա՞ն ֆորմալ չափանիշներ, գործընթացը կարգավորող մեխանիզմներ, եթե կա ձևավորված խումբ: Եթե չկա խումբ՝ ինչպե՞ս է կազմակերպվում գործընթացը:

8. Խմբի անդամներն ի՞նչ մասնագետներ են և ի՞նչ սկզբունքով են ընտրվում: Կարո՞ղ են մարդիկ (այլ մասնագետներ) իրենց ցանկությամբ ընդգրկվել այդ խմբում, ինչպե՞ս: Եթե ոչ, ինչո՞ւ:

9. Ինչպե՞ս է գործում (ի՞նչ հաճախականությամբ են հանդիպում) որոշում կայացնողների խումբը, քանի հոգուց է բաղկացած լինում, ի՞նչպես են վերջնական որոշում կայացնում սոցիալական աջակցության տրամադրման հարցում (քվեարկության միջոցով, դիտարկումների...):

10. Արդյոք սոցիալական աջակցության հանձնաժողովի քննարկումների արդյունքները բաց են (բոլոր ցանկացողները կարող են ծանոթանալ կայացված որոշումներին):

11. Որոշման կայացումից հետո ի՞նչ ժամանակահատվածում է տրամադրվում սոցիալական օգնությունը շահառուին:

12. Արդյոք սոցիալական աջակցության տրամադրման որոշումների կայացումը կարգավորվում է ըստ ֆորմալ օրենքի: Եթե այո՝ ո՞րն է այն, եթե ոչ, ապա ի՞նչ սկզբունքով է կայացվում որոշումները:

13. Ի՞նչ փուլերով և օղակներով է անցնում սոցիալական աջակցության համար դիմած քաղաքացու դիմումը մինչև համապատասխան օգնության տրամադրումը:

14. Արդյոք սոցիալական աջակցության տրամադրման համար առկա բոլոր դիմումներն են քննարկվում/քննարկման ներկայացվում: Եթե այո, ապա միջինում քանի՞ դիմում է ներկայացվում յուրաքանչյուր քննարկման ժամանակ: Եթե ոչ ո՞րն է քննարկման համար ընտրված դիմումի ընտրության հիմքը:

15. Անհրաժեշտություն կա՞ սոցիալական աջակցության համար դիմած քաղաքացիների կարիքի գնահատումն իրականացնել մինչ օգնության տրամադրումը: Եթե ոչ, ինչու՞: Եթե այո՝ արդյոք առկա մեխանիզմներն ու ռեսուրսները բավական են կյանքի դժվարին իրավիճակում հայտնված մարդկանց կարիքի գնահատման համար: Դուք իրականացնո՞ւմ եք կարիքի գնահատում մինչ սոցիալական աջակցության տրամադրումը:

16. Ինչքանո՞վ են անհրաժեշտ համագործակցության տարբեր ուղիների առկայությունն այս գործընթացում: Համագործակցության ի՞նչ նոր ուղիներ եք տեսնում այս

ուորտում(օրինակ համայնքային սոցիալական աշխատողների կամ դեպք վարողների ներառում և այլն):

17. Ի՞նչ պարբերականությամբ են քաղաքացիներին տրամադրվում սոցիալական օգնություններ: Առավելագույնը ի՞նչ օգնության համար են դիմում քաղաքացիները:

18. Ինչպե՞ս եք որոշում շահառուին տրամադրվող օգնության գումարի չափը ըստ դիմումի, թե այլ սկզբունքով, եթե այլ սկզբունքով, խնդրում եմ մանրամասնեք:

19. Հետևո՞ւմ եք, թե նպատակային են արդյոք ծախսվում շահառուների կողմից ստացված գումարները:

20. Եթե մարդիկ չեն կարողանում անձամբ դիմում ներկայացնել սոցիալական աջակցության համար (հեռու բնակավայրում են կամ ֆիզիկապես իվիճակի չեն), ինչպե՞ս է կարգավորվում խնդիրը:

21. Եթե տրամադրվել է սոցիալական աջակցություն և շահառուն չի ներկայացել, չի ստացել օգնությունն՝ ինչ է նախատեսվում այդ պարագայում:

22. Ո՞ւմ և ինչպե՞ս է ներկայացվում հաշվետվություն տրամադրված սոցիալական աջակցության վերաբերյալ:

23. Ինչպե՞ս եք տեղեկացնում հասարակությանը առկա սոցիալական աջակցության տեսակների մասին:

24. Հիմնականում ինչպե՞ս են սոցիալապես անապահով ընտանիքները/մարդիկ տեղեկանում սոցիալական աջակցության մասին:

25. Ի՞նչ բացթողումներ և ի՞նչ առավելություններ ունի սոցիալական աջակցության տրամադրման գործընթացի կազմակերպումն ու իրականացումը:

26. Ի՞նչ նոր մեխանիզմներ/լուծումներ կառաջարկեք, որը կբարելավվի սոցիալական աջակցության տրամադրման գործընթացը:

27. Ի՞նչ այլ առաջարկներ ունեք:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ ԿԱՅԱՑՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

ԽՈՐԻՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

Հաստատության Անուն _____, Հարցվողի սեռը՝ _____, Տարիքը՝ _____
Ամսաթիվ / / _____

Պետական բյուջեից տրամադրվող սոցիալական աջակցության գումարների բաշխումը
2018-2019թթ.

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը իրականացնում է հարցում, որի նպատակ է պարզել, թե ինչպես են բաշխվում կառավարության կողմից տրամադրվող և մարզպետարանների կողմից տնօրինվող սոցիալական աջակցության միջոցները, որոնք տրամադրվում են կյանքի դժվարին իրավիճակում հայտնված բնակչությանը, ինչ ռիսկեր և խնդիրներ է պարունակում վերոնշյալ գործընթացը և դրա արդյունավետությունը բարձրացնելու ինչ ուղիներ կան: Շնորհակալություն ժամանակ տրամադրելու և պատրաստակամորեն հարցազրույցին մասնակցելու համար:

1. Խնդրում եմ մի փոքր ներկայացնել մարզպետարանի բյուջեից հատկացվող սոցիալական աջակցության տրամադրման գործընթացը:

2. Ինչպե՞ս եք իրականացնում սոցիալական աջակցության տրամադրման բյուջեի վերահսկումն ու վերլուծությունը:

3. Ի՞նչ սկզբունքով եք դուք ընդգրկվել սոցիալական աջակցություն տրամադրելու համար որոշումներ կայացնողների խմբում:

4. Սոցիալական աջակցություն ստանալու համար դիմելու պարագայում օրենքով սահմանված ի՞նչ պահանջների պիտի բավարարի շահառուն, ի՞նչ հիմնավորումներ կամ փաստաթղթեր պետք է ներկայացնի:

5. Սոցիալական աջակցություն տրամադրելու/չտրամադրելու հարցում ո՞վ/ուրե՞ր են որոշում կայացնում:

6. Ինչպե՞ս է գործում /ի՞նչ հաճախականությամբ են հանդիպում/ որոշում կայացնողների խումբը, քանի հոգուց է բաղկացած լինում, ինչպե՞ս են վերջնական որոշում կայացնում սոցիալական աջակցության տրամադրման հարցում/քվեարկության միջոցով, դիտարկումների.../:

7. Արդյոք սոցիալական աջակցության հանձնաժողովի քննարկումների արդյունքները բաց են /բոլոր ցանկացողները կարող են ծանոթանալ կայացված որոշումներին/:

8. Որոշման կայացումից հետո ի՞նչ ժամանակահատվածում է տրամադրվում սոցիալական օգնությունը շահառուին:

9. Արդյոք սոցիալական աջակցության տրամադրման որոշումների կայացումը կարգավորվում է ըստ ֆորմալ օրենքի/հատուկ մշակված կանոնակարգով ու ընթացակարգով/: Եթե այո՝ ո՞րն է այն, եթե ոչ, ապա ի՞նչ սկզբունքով է կայացվում որոշումները:

10. Արդյոք սոցիալական աջակցության տրամադրման համար առկա բոլոր դիմումներն են քննարկվում/քննարկման ներկայացվում: Եթե այո, ապա միջինում քանի դիմում է ներկայացվում յուրաքանչյուր քննարկման ժամանակ: Եթե ոչ ո՞րն է քննարկման համար ընտրված դիմումի ընտրության հիմքը/պատճառը:

11. Անհրաժեշտություն կա՞ սոցիալական աջակցության համար դիմած քաղաքացիների կարիքի գնահատումն իրականացնել մինչ օգնության տրամադրումը: Եթե ոչ, ինչու՞: Եթե այո՝ արդյոք առկա մեխանիզմներն ու ռեսուրսները բավական են կյանքի դժվարին իրավիճակում հայտնված մարդկանց կարիքի գնահատման համար: Դուք իրականացնո՞ւ եք կարիքի գնահատում մինչ սոցիալական աջակցության տրամադրումը:

12. Ինչքանո՞վ են անհրաժեշտ համագործակցության տարբեր ուղիների առկայությունն այս գործընթացում: Համագործակցության ի՞նչ նոր ուղիներ եք տեսնում այս ոլորտում/օրինակ համայնքային սոցիալական աշխատողների կամ դեպք վարողների ներառում և այլն/:

13. Ի՞նչ պարբերականությամբ են քաղաքացիներին տրամադրվում սոցիալական օգնություններ: Առավելապես ի՞նչ օգնության համար են դիմում քաղաքացիները:

14. Ինչպե՞ս եք որոշում շահառուին տրամադրվող գումարի/օգնության չափը/ըստ դիմումի, թե այլ սկզբունքով/:

15. Հետևում եք, թե նպատակային են արդյոք ծախսվում շահառուների կողմից ստացված գումարները:

16. Եթե մարդիկ չեն կարողանում անձամբ դիմում ներկայացնել սոցիալական աջակցության համար(հեռու բնակավայրում են կամ ֆիզիկապես իվիճակի չեն), ինչպե՞ս է կարգավորվում խնդիրը:

17. Եթե տրամադրվել է սոցիալական աջակցություն և շահառուն չի ներկայացել, չի ստացել օգնություն՝ ինչպե՞ս է կարգավորվում խնդիրը:

18. Ո՞ւմ և ինչպե՞ս է ներկայացվում հաշվետվություն տրամադրված սոցիալական աջակցության վերաբերյալ:

19. Ըստ Ձեզ հիմնականում ինչպե՞ս են սոցիալապես անապահով ընտանիքները/մարդիկ տեղեկանում սոցիալական աջակցության մասին:

20. Ի՞նչ բացթողումներ և ի՞նչ առավելություններ ունի սոցիալական աջակցության տրամադրման գործընթացի կազմակերպումն ու իրականացումը:

21. Ի՞նչ նոր մեխանիզմներ/լուծումներ կառաջարկեք, որը կբարելավվի սոցիալական աջակցության տրամադրման գործընթացը:

22. Ի՞նչ այլ առաջարկներ ունեք:

**ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻԶՆԵՐԻ ՀԵՏ (ԽՈՒՄԲ ՁԵՎԱՎՈՐՈՂԻ)
ԽՈՐԻՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ**

ՈՒՂԵՑՈՒՅՑ

1. Խնդրում եմ մի փոքր ներկայացնել մարզպետարանի բյուջեից հատկացվող սոցիալական աջակցության տրամադրման գործընթացը:

Յուրաքանչյուր տարի ՀՀ պետական բյուջեով ՀՀ Լոռու մարզպետարանին «Այլ նպաստներ» հոդվածով հատկացվում է 30.0 մլն դրամ, որը տրամադրվում է քաղաքացիներին՝ որպես դրամական օգնություն: Քաղաքացու օգնության դիմումը ուսումնասիրվում է մարզպետարանում՝ համապատասխան ստորաբաժանման կողմից, որին հասցեագրված է դիմումը: Ուսումնասիրության հիմքով ստորաբաժանումը ներկայացնում է առաջարկություն տվյալ քաղաքացուն դրամական աջակցություն տրամադրելու մասին, որը մյուս ուսումնասիրված և սոցիալական աջակցության համար հարգված դիմումների հետ միասին ընդգրկվում են մարզպետի համապատասխան որոշման նախագծում: Որոշումը ընդունվելուց հետո քաղաքացիները անձը հաստատող փաստաթղթով ներկայանում են մարզպետարան և նրանց կանխիկ տրամադրվում է որոշմամբ նախատեսված գումարը:

2. Ինչպե՞ս է նախագծվում/կազմվում սոցիալական աջակցության բյուջեն, մշակվում գործողությունների պլանը: Տարանջատվո՞ւմ են արդյոք սոցիալապես անապահովների ֆինանսավորման առաջնահերթությունները:

Գումարները տրամադրվում են մարզպետարանի ապարատի պահպանման «Այլ նպաստներ» հոդվածով՝ մարզպետարանի կողմից ներկայացված բյուջետային հայտի հիման վրա: Գումարի վերջնական չափը սահմանվում է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից, ՀՀ Լոռու մարզպետարանին հատկացվել է 30.0 մլն դրամ: Սոցիալապես անապահով ընտանիքների ֆինանսավորման հարցում առաջնահերթություն չկա, դրսևորվում է անհատական մոտեցում՝ ըստ կարիքի:

3. Ինչպե՞ս եք իրականացնում սոցիալական աջակցության տրամադրման բյուջեի վերահսկումն ու վերլուծությունը:

Գումարը մուտքագրվում է ՀՀ Լոռու մարզպետարանի դրամարկղ և սահմանված կարգով, համաձայն մարզպետի որոշումների, տրվում է քաղաքացիներին: Դրամարկղի գիրքը վարվում է սահմանված կարգով, որը հստակ արտացոլում է մուտքագրված և ելքագրված գումարների շարժը: Յուրաքանչյուր տարի կատարվում են համապատասխան ուսումնասիրություններ և վերլուծություններ, ներքին աուդիտի միջոցով իրականացվում են փաստաթղթային ստուգումներ:

4. Ի՞նչ սկզբունքով է պետության կողմից սոցիալական աջակցության համար ֆինանսական միջոցներ տրամադրվում մարզպետարանին և պատկան մարմինների կողմից վերահսկվում է արդյոք այդ միջոցների բաշխումը: Եթե այո՝ ինչպե՞ս:

Գումարները տրամադրում է ՀՀ ֆինանսների նախարարությունը՝ ՀՀ Լոռու մարզպետարանի կողմից ներկայացված հայտերի հիման վրա: Ֆինանսավորումը իրականացվում է բյուջեով տվյալ եռամսյակում նախատեսված գումարների

սահմաններում: ՀՀ ֆինանսների նախարարության կողմից մարզպետարաններում պարբերաբար իրականացվող համալիր ստուգումների ընթացքում պարտադիր ստուգվում է նաև քաղաքացիներին տրամադրված օգնության գումարների ծախսման գործընթացը:

5. Սոցիալական աջակցություն ստանալու համար դիմելու պարագայում օրենքով սահմանված ի՞նչ պահանջների պիտի բավարարի շահառուն, ի՞նչ հիմնավորումներ կամ փաստաթղթեր պետք է ներկայացնի:

Սոցիալական աջակցություն ստանալու համար քաղաքացին դիմում է տարաբնույթ հարցերով /սոցիալական աջակցության պահանջ, կենցաղային դժվարություններ, բուժական ծախսերի, կոմունալ ծառայությունների դիմաց վճարման հնարավորության պակաս և այլն/: Առավելաբար շահառուն սոցիալական աջակցություն ստանալու հարցն է բարձրացնում, առանց կոնկրետ նշելու՝ թե ակնկալվող օգնությունով ինքը ի՞նչ ծախս պետք է հոգա /այդ հանգամանքը հիմնականում բացահայտվում է նաև դիմումի ուսումնասիրման ընթացքում/: Շահառուներին՝ նրանց որևէ խնդրի լուծման /բավարարման/ համար մարզպետարանի կողմից պահանջներ չեն ներկայացվում: Եթե քաղաքացին դիմում է սոցիալական աջակցության համար /ընտանեկան վիճակի նկարագրողականով և այլն/, ապա այդ դեպքում քննարկվում է տվյալ ընտանիքին սոցիալական դրամական աջակցություն տրամադրելու հարցը: Չափը հիմնականում որոշվում է քաղաքացու ընտանիքի մասին տեղեկատվության /բնակարանային պայմաններ՝ տնակային, հանրակացարանային, վարձակալական, կենցաղային հանգամանքներ, ընտանիքի կազմ՝ ծանրաբեռնվածություն, եկամուտների սակավություն՝ առկա տվյալներով, և այլն/ վերլուծության/քննարկման հիման վրա:

Առողջապահության խնդրով աջակցության համար հիմնականում քննարկման թեմա է դիտվում բուժման հարցին հնարավորինս աջակցելու խնդիրը: Այդ հարցով իրենց կարծիքն են ներկայացնում բժիշկ մասնագետները, որոնք քաղաքացուն տրված բժշկական եզրակացությունների հիման վրա օգնում են պարզել տվյալ շահառուին տրամադրվելիք դրամական աջակցության չափը:

6. Սոցիալական աջակցություն տրամադրելու/չտրամադրելու հարցում ո՞վ/ովքե՞ր են որոշում կայացնում:

Սոցիալական դրամական աջակցություն ստանալու/չստանալու հարցի հիմքում դրվում է նաև նախորդած ժամանակահատվածում տվյալ ընտանիքին արդեն իսկ ցուցաբերված դրամական աջակցությունը, կամ տվյալ ժամանակահատվածում առկա միջոցների անբավարարությունը /տվյալ ամսվա մասհանումների արդյունքում, քանի որ պետության կողմից տրամադրված միջոցների բաշխումը կատարվում է համամասնորեն/: Հիմնականում ընտանիքին աջակցելու համար կարևորվում է ընտանիքների անապահովության գնահատման համակարգում առկա տեղեկատվությունը: Եթե ընտանիքը հիշյալ համակարգում չի հաշվառված /կամ փաստագրված/, ապա ընտանիքը ուղղորդվում է Միասնական սոցիալական ծառայություն՝ հաշվառվելու կամ /վերա/փաստագրվելու, քանի որ պետությունը աջակցության խնդիր ունեցող ընտանիքներին աջակցելու համար է ներդրել

ընտանիքների անապահովության գնահատման համակարգը:

7. Որոշում կայացնողների խմբի ձևավորման համար կա՞ն ֆորմալ չափանիշներ, գործընթացը կարգավորող մեխանիզմներ, եթե կա ձևավորված խումբ: Եթե չկա խումբ՝ ինչպե՞ս է կազմակերպվում գործընթացը:

Որոշում կայացնողների խմբում ընդգրկված են մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչներ, որոնք կայացնում են նախնական որոշումը: Իսկ աշխատանքային ընթացքը /դիմումի ուսումնասիրություն, տվյալների համադրում և առաջարկի նախապատրաստություն, վերլուծություն, ներկայացում, քննարկում և այլն/ կատարվում է ստորաբաժանումների աշխատակիցների կողմից: Որպես այդպիսին խմբեր փաստացի չեն ձևավորվում, սակայն համակատարող լինելու դեպքում կատարվում է տվյալների փոխանակում, համադրում, վերլուծություն, խմբային քննարկում և այլն:

8. Խմբի անդամներն ի՞նչ մասնագետներ են և ի՞նչ սկզբունքով են ընտրվում: Կարո՞ղ են մարդիկ (այլ մասնագետներ) իրենց ցանկությամբ ընդգրկվել այդ խմբում, ինչպե՞ս: Եթե ոչ, ինչո՞ւ:

Սոցիալական խմբեր, որպես այդպիսին ձևավորվում են հընթացս՝ նամակի հասցեատեր՝ համակատարող ստորաբաժանումների ներկայացուցիչների մասնակցությամբ: Նրանց՝ տարբեր բնագավառների մասնագետների կողմից ներկայացված տեղեկատվությունը ամփոփվում է հանձնարարականի առաջին կատարողի կողմից և ներկայացվում է վերջնական պատասխանը. կամ տրամադրվում է սոցիալական աջակցությունը, կամ մերժվում է, կամ ուղղորդվում է նամակը ըստ պատկանելույն /վերահասցեագրում, միջնորդություն ՏԻՄ-երին, նախարարություններ կամ գերատեսչություններ, ովքեր իրավասու են քաղաքացու կողմից բարձրացված հարցի լուծման համար:

9. Ինչպե՞ս է գործում (ի՞նչ հաճախականությամբ են հանդիպում) որոշում կայացնողների խումբը, քանի հոգուց է բաղկացած լինում, ի՞նչպես են վերջնական որոշում կայացնում սոցիալական աջակցության տրամադրման հարցում (քվեարկության միջոցով, դիտարկումների...):

**Հիմնականում տվյալ հարցի պատասխանը ներառված է 8-րդ կետի պատասխանում:
Քաղաքացու հարցին պատասխան է տրվում տվյալ ստորաբաժանման կողմից, մի քանի համակատարողի դեպքում՝ միասնական տվյալների ամփոփումով՝ պատասխանը ներկայացնում է հանձնարարականի առաջին կատարողը:**

10. Արդյոք սոցիալական աջակցության հանձնաժողովի քննարկումների արդյունքները բաց են (բոլոր ցանկացողները կարող են ծանոթանալ կայացված որոշումներին):

Նման ցանկություն հայտնող դեռևս չի եղել, սակայն պետք է նշել, որ որևէ արգելանք չի լինի ցանկացող լինելու դեպքում:

11. Որոշման կայացումից հետո ի՞նչ ժամանակահատվածում է տրամադրվում սոցիալական օգնությունը շահառուին:

Քանի որ դրամական միջոցները բաշխվում են ամսական համամասնությամբ, և

այդ տարբերակով էլ ընթանում է դրամական միջոցների տրամադրման գործընթացը: Մարզպետի որոշումից հետո արդեն իսկ քաղաքացին կարող է այն ստանալ, եթե առկա են բավարար ֆինանսական միջոցներ տվյալ ժամանակահատվածում /հնարավոր է գումարի սակավություն, սակայն դիմումների մեծ հոսք/:

12. Արդյոք սոցիալական աջակցության տրամադրման որոշումների կայացումը կարգավորվում է ըստ ֆորմալ օրենքի: Եթե այո՞րն է այն, եթե ոչ, ապա ի՞նչ սկզբունքով է կայացվում որոշումները:

Մարզպետը որոշումները կայացնում է ստորաբաժանումներից տրված առաջարկություններից ելնելով՝ ձևավորված ամփոփ արդյունքի հիման վրա կազմվում է մարզպետի որոշման նախագիծը: Հնարավոր է մարզպետի որոշման նախագիծ ներկայացվի ամիսը մի քանի անգամ՝ սոցիալական աջակցություն տրամադրելու մասին: Որոշման մեջ նշվում է քաղաքացու անունը, ազգանունը, համայնքը, տրամադրված գումարի չափը: Նման սակավ տեղեկատվությունը ըստ էության չի խախտում «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետի պահանջները, այն է՝ անձնական տվյալը ֆիզիկական անձին վերաբերող ցանկացած տեղեկություն է, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել անձի ինքնությունը:

Դրամական օգնություն ստանալու մասին քաղաքացին անհատապես իրազեկվում է /ակնհայտ է, որ քաղաքացին գուցե թե գաղափար անգամ չունենա մարզպետի որոշումների մասին, սակայն պետական կառույցը չի խախտում անձնական տվյալների բացահայտման օրենսդրական նորմը:

13. Ի՞նչ փուլերով և օղակներով է անցնում սոցիալական աջակցության համար դիմած քաղաքացու դիմումը մինչև համապատասխան օգնության տրամադրումը:

Քաղաքացու դիմումը մուտքագրվում է /կամ անձամբ, կամ էլեկտրոնային տարբերակով/, ապա մարզպետը, գլխավոր քարտուղարը, կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները՝ վարչությունների/բաժինների պետերը համապատասխան հանձնարարություն են տալիս աշխատակիցներին: Մեկից ավելի համակատարողների դեպքում դիմումը բազմակողմանի ուսումնասիրվում է, ապա ներկայացվում է առաջարկություն. դիմումը պատասխանվում է՝ կոնկրետ մերժման հիմքով /միջոցների անբավարարություն, ուղղորդումներ և այլն, բազմակի են դեպքերը, երբ առկա են նախկինում բավարարված և դրամական աջակցություն ստացած քաղաքացիների կրկնակի դիմումները/: Իսկ եթե դիմումը ունենում է դրական եզրահանգման բավարար հիմնավորվածություն, ապա այն հարգվում է: Աջակցության գումարի չափը որոշվում է տարբեր չափանիշերի համադրման արդյունքում: Լինում են դեպքեր, երբ մարզպետը անմիջականորեն /եթե այն շտապ է/ ինքն է որոշում քաղաքացուն տրամադրվող օգնության չափը և դրան համապատասխան ընթացք է տալիս:

14. Արդյոք սոցիալական աջակցության տրամադրման համար առկա բոլոր դիմումներն են քննարկվում/քննարկման ներկայացվում: Եթե այո, ապա միջինում քանի՞ դիմում է

ներկայացվում յուրաքանչյուր քննարկման ժամանակ: Եթե ոչ ո՞րն է քննարկման համար ընտրված դիմումի ընտրության հիմքը:

Քաղաքացու կողմից ներկայացված դիմումները պարտադիր կարգով՝ տրված հանձնարարականին համապատասխան ստորաբաժանումների կողմից ուսումնասիրվում են, համադրվում են տվյալ ընտանիքին վերաբերող տեղեկատվությունը և առաջարկություն է ներկայացվում /բավարարում՝ դրամական աջակցության տրամադրում, մերժում՝ պատճառի նշումով, ուղղորդում՝ այլ մարմին/:
Միջին թվաքանական տվյալներով ամսական կտրվածքով դիմումների քանակը տարբեր է լինում տարբեր ժամանակահատվածներում /այն տատանվում է 120-240 դիմումի սահմաններում՝ ենթադրաբար: Կան քաղաքացիներ, ովքեր մեկ ամսվա ընթացքում կարող են ամեն օր գրել կամ երկար ժամանակ չգրել:/

15. Անհրաժեշտություն կա՞ սոցիալական աջակցության համար դիմած քաղաքացիների կարիքի գնահատումն իրականացնել մինչ օգնության տրամադրումը: Եթե ոչ, ինչու՞: Եթե այո՝ արդյոք առկա մեխանիզմներն ու ռեսուրսները բավական են կյանքի դժվարին իրավիճակում հայտնված մարդկանց կարիքի գնահատման համար: Դուք իրականացնո՞ւմ եք կարիքի գնահատում մինչ սոցիալական աջակցության տրամադրումը:

Քաղաքացու դիմումի հիմքով կատարվող ուսումնասիրությունը ինքնին հանդիսանում է կարիքի գնահատում, քանի որ դրա հիմքում է ձևավորվում սոցիալական աջակցություն տրամադրելու վերաբերյալ առաջարկությունը, տվյալների բազմակողմանի համադրումը: Այսինքն, կարիքի գնահատում կատարվում է ստորաբաժանումների կողմից՝ տարբեր տեղեկատվական աղբյուրներից ստացված տեղեկույթի հիման վրա:

16. Ինչքանո՞վ են անհրաժեշտ համագործակցության տարբեր ուղիների առկայությունն այս գործընթացում: Համագործակցության ի՞նչ նոր ուղիներ եք տեսնում այս ոլորտում (օրինակ՝ համայնքային սոցիալական աշխատողների կամ դեպք վարողների ներառում և այլն):

Համագործակցությունն առկա է սոցիալական ապահովության մարմինների /այսօր՝ Միասնական սոցիալական ծառայություն/, ՏԻՄ մարմինների, առողջապահական կազմակերպությունների, կրթական հաստատությունների միջև: Առաջիկայում սոցիալական աշխատողներին կամ դեպք վարողներին նման աշխատանքներում ներագրավումը, ինչ խոսք, շատ կարևոր և օգտակար կլինի հարցի համակողմանի ուսումնասիրման և սոցիալական աջակցության տրամադրման համատեքստում:

17. Ի՞նչ պարբերականությամբ են քաղաքացիներին տրամադրվում սոցիալական օգնություններ: Առավելապես ի՞նչ օգնության համար են դիմում քաղաքացիները:

Քաղաքացիներին աջակցությունը տրամադրվում է ըստ կարիքավորության, և ցանկալի է, որ այն տրամադրվի տվյալ օրացուցային տարվա մեջ մեկ անգամ: Քաղաքացիները հիմնականում դիմում են անապահով լինելու, կյանքի դժվարին վիճակում հայտնվելու, տարբեր այլ իրավիճակներում լինելու դեպքերում: Սոցիալական աջակցություն ստանալու մասին դիմում-խնդրանքները գրեթե 80 տոկոսն են կազմում:

18. Ինչպե՞ս եք որոշում շահառուին տրամադրվող օգնության գումարի չափը ըստ դիմումի, թե այլ սկզբունքով, եթե այլ սկզբունքով, խնդրում եմ մանրամասնել:

Քաղաքացու դիմումի հիման վրա տրամադրվող օգնության չափը որոշվում է ըստ շահառուի ներկայացրած դիմումի բովանդակության /ընթացիկ դժվարություններ, և այլն/, ուսումնասիրությունների ընթացքում ձեռք բերված տվյալների և դրանց ճշտման հիման վրա: Օգնության չափը հիմնականում միջինը կազմում է 15.000-ից՝ 20.000 դրամ:

19. Հետևում եք, թե նպատակային են արդյոք ծախսվում շահառուների կողմից ստացված գումարները:

Քաղաքացիներին տրամադրվող գումարների նպատակային ծախսելու հարցը վերահսկելու հարկ չկա, քանի որ այն իրավասություն է ենթադրում, որը մարզպետարանը չունի:

20. Եթե մարդիկ չեն կարողանում անձամբ դիմում ներկայացնել սոցիալական աջակցության համար (հեռու բնակավայրում են կամ ֆիզիկապես ի վիճակի չեն), ինչպե՞ս է կարգավորվում խնդիրը:

Հնարավոր է քաղաքացու կողմից սոցիալական աջակցություն ստանալու հարցը այլ անձի միջոցով իրականացնելու խնդրանք, կամ որևէ անապահով ընտանիքի որևէ կազմակերպության կամ մեկ այլ քաղաքացու կողմից նրանց օժանդակելու խնդրանք-միջնորդություններ ներկայացնելու դեպքեր, սակայն դրանք շատ աննշան են: Հիմնականում քաղաքացին ինքն է դիմում իր հարցով և ինքն էլ անձամբ աջակցությունը ստանում է:

21. Եթե տրամադրվել է սոցիալական աջակցություն և շահառուն չի ներկայացել, չի ստացել օգնություն՝ ինչ է նախատեսվում այդ պարագայում:

Հիմնականում քաղաքացին ինքն է ստանում իրեն տրված սոցիալական աջակցությունը, և գրեթե բացակայում են այն դեպքերը, որ քաղաքացին չստանա այն:

22. Ո՞ւմ և ինչպե՞ս է ներկայացվում հաշվետվություն տրամադրված սոցիալական աջակցության վերաբերյալ:

Նման հաշվետվային ընթացք չի նախատեսված: Միայն քարտուղարությունն է որոշակի ժամանակահատվածում թվային տվյալներով ներկայացնում տեղեկատվություն՝ մուտքագրված դիմումների բնույթի, տեսակի և քանակային շարժի մասին:

23. Ինչպե՞ս եք տեղեկացնում հասարակությանը առկա սոցիալական աջակցության տեսակների մասին:

ՀՀ Լոռու մարզում գործող տեղեկատվական միջոցների կողմից լայնորեն լուսաբանվել են աջակցության հարցերը /հոդվածներ, հրապարակումներ, ռեպորտաժներ և այլն/, որոնք նաև մարզպետի կամ մարզպետարանի աշխատակիցների կողմից համայնքներ կատարվող այցելությունների ժամանակ է ներկայացվում բնակչությանը՝ իրազեկելով կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքներին/անձանց սոցիալական աջակցության հարցերում սատարելու

հնարավորությունների մասին: Մարզում նման տեղեկատվության մասին առկա է իրազեկվածության բարձր մակարդակ /այդ մասին է խոսում մարզի բոլոր համայնքներից քաղաքացիների դիմումների առկայությունը/: Եթե համայնքը չի օգնում, ապա այդ դեպքում քաղաքացին դիմում է մարզպետին, վարչապետին և այլն:

24. Հիմնականում ինչպե՞ս են սոցիալապես անապահով ընտանիքները/մարդիկ տեղեկանում սոցիալական աջակցության մասին:

Դիմումը հարգվելու դեպքում քաղաքացին իրազեկվում է, անձամբ էլ ստանում է սոցիալական աջակցությունը:

25. Ի՞նչ բացթողումներ և ի՞նչ առավելություններ ունի սոցիալական աջակցության տրամադրման գործընթացի կազմակերպումն ու իրականացումը:

Մշտապես քաղաքացիների դժգոհությունը կապված է մի քանի անգամ օգնություն ստանալու խնդրանքի մերժման հետ: Սակայն պարզ է, որ տրամադրված միջոցները միշտ էլ բավարար չեն այդ նպատակի համար /դիմողների մեծաթիվ լինելը միշտ առկա է/:

26. Ի՞նչ նոր մեխանիզմներ/լուծումներ կառաջարկեք, որը կբարելավվի սոցիալական աջակցության տրամադրման գործընթացը:

Ցանկալի կլիներ, որ գործեր միասնական տեղեկատվական հարթակը /այստեղ ընդգրկվեր նաև համայնքային բյուջեից քաղաքացիների տրամադրվող օգնությունները/, որին քաղաքացին կհասցեագրեր իր դիմումը և այն անմիջականորեն կարող էր համակողմանի տեղեկատվական վերլուծության ենթարկվել մեծաթիվ կառույցների կողմից: Ներկայումս այդ աշխատանքը դրված է պետական պաշտոնյայի վրա, որի վերջնական գնահատականը միշտ էլ քաղաքացուն չի բավարարում:

27. Ի՞նչ այլ առաջարկներ ունեք:

Հասարակական կազմակերպությունների մասնակցությունը սոցիալական աջակցության տրամադրման գործընթացներին ցանկալի է, քանի որ այդ տարբերակով մեծանում է նաև հանրային վստահությունը: Միանգամայն պարզ է, որ այդ աշխատանքներին ՀԿ-ների չմասնակցելը միշտ էլ իր մեջ ներառում է անվստահության տարր, որքան էլ որ սոցիալական աջակցությունը լինի բավարար չափի և հասցեական:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ